«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 114-Լ

ք. Երևան 03 Մարտի 2025թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 34-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության մսին օրենքի 22-րդ հոդվածի, «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետի և Ինստիտուտի Գիտական Խորհրդի աշխատակարգի 20-րդ կետի 15-րդ ենթակետի, 77-րդ և 78-րդ կետերի դրույթները՝ Ինստիտուտի Գիտական Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի 2023 թվականի փետրվարի 28-ի ««Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «Կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման» ընթացակարգը հաստատելու մասին» N34-Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մարտի 4-ից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված
«ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի Գիտական խորհրդի
2025 թվականի մարտի 3-ի Թիվ 114-Լ որոշման

«Հավելված
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի
2023 թվականի փետրվարի 28-ի Թիվ 34-Լ որոշման»

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

(նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետև՝ Ինստիտուտ) մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը կանոնակարգում է Ինստիտուտի բակալավրի, մագիստրոսական, հետբուհական և լրացուցիչ կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման գործընթացները:

2. Ինստիտուտում իրականացվող կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացները կրթական ծրագրերի որակի ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներն են:

3. Սույն ընթացակարգը սահմանում է Ինստիտուտի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացների նպատակները և խնդիրները, դրանց ներկայացվող պահանջները, այդ գործընթացն իրականացնողների պարտականությունները և համապատասխան ժամանակացույցերը:

4. Ընթացակարգում ներկայացվում են կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման հաշվետվության ձևաթղթերը՝ ծրագրի կատարողականի արդյունքային ցուցանիշների կազմով, ինչպես նաև ծրագրի պարբերական վերանայման համար պահանջվող փաստաթղթային փաթեթի կազմը:

5. Ծրագրերի ընթացիկ մշտադիտարկումն իրականացնում են բուհի ֆակուլտետներն ու ամբիոնները՝ ուսումնական գործընթացի համար պատասխանատու ստորաբաժանումների հետ համագործակցությամբ: Վերանայման գործընթացն իրականացվում է մշտադիտարկման արդյունքների հիման վրա: Մշտադիտարկման և վերանայման գործընթացների իրականացման պարբերականությունը որոշվում է սույն ընթացակարգով՝ ելնելով ծրագրի կրթական մակարդակից և ձևից:

6. Ընթացակարգի գործարկումը վերահսկում և համակարգում է Ուսումնագիտական գծով պրոռեկտորը:

7. Վերանայված կրթական ծրագրերը հաստատվում են Գիտական խորհրդի կողմից:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

2.1. Մշտադիտարկման նպատակը և խնդիրները

8. Մասնագիտական կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման նպատակն է՝ գնահատել գործող կրթական ծրագրերի որակը և դրանց համապատասխանությունը որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների բնութագրիչներին, վերհանել խնդիրներ, և առաջարկել բարելավման քայլեր կրթության որակի շարունակական զարգացման համար:

9. Մշտադիտարկման խնդիրներն են.

1) գնահատել կրթական ծրագրի ընթացքի համապատասխանությունը նախասահմանած նպատակներին և ակնկալվող վերջնարդյունքներին,

2) գնահատել ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման ընթացքը,

3) գնահատել դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը,

4) վերհանել կրթական գործընթացի արդյունավետ իրականացման համար ռեսուրսային կարիքները,

5) դուրս բերել կրթական ծրագրի թերություններն ու խոչընդոտները և առաջարկել անհրաժեշտ բարելավումներ,

6) վերլուծել հիմնական քանակական և որակական ցուցիչները՝ համաձայն հավելվածներում ներկայացվող աղյուսակների, այդ թվում՝ ուսանողական համակազմ, ընդունելության և հեռացման ցուցանիշները, դրանց պատճառները, ուսանողների հաճախելիությունը, բացակայությունների հնարավոր պատճառները, առաջադիմությունը, շրջանավարտների զբաղվածությունը, ներքին և արտաքին շահառուների բավարարվածության մակարդակը, ՊԴԱ կազմի մասնագիտական որակավորումները, դրանց համապատասխանությունը դասավանդվող առարկաներին,

7) գնահատել կրթական ծրագրի որակի բարելավման նախորդ մշտադիտարկման արդյունքում կազմված բարելավման ծրագրի կատարողականը (Հավելված 2՝ աղյուսակ 3),

8) մշակել կրթական ծրագրի որակի բարելավմանն ուղղված գործողությունների պլան և վերահսկել վերջինիս իրականացումը:

2.2. Մշտադիտարկման ընթացակարգը

10. Կրթական ծրագրի մշտադիտարկման գործընթացը նախաձեռնում և իրականացնում է ֆակուլտետը՝ ամբիոնների հետ համագործակցությամբ՝ երկամյա պարբերականությամբ՝ ըստ ֆակուլտետի խորհրդի կողմից երաշխավորված պլան–ժամանակացույցի (Հավելված 1):

11. Մշտադիտարկման գործընթացն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր կրթական ծրագրի կամ ծրագրերի խմբի համար ռեկտորի հրամանով ձևավորվում է մշտադիտարկման խումբ (այսուհետ՝ ՄԽ) և հաստատվում գործողությունների իրականացման ժամանակացույցը:

12. Մշտադիտարկող խումբը բաղկացած է առնվազն 5 անդամից: Խմբի ղեկավարը նշանակվում է տվյալ կրթական ծրագրի պատասխանատուն, իսկ անդամներն ընտրվում են կրթական ծրագրի դասախոսական կազմից՝ խմբի ղեկավարի առաջադրմամբ: Խմբում ընդգրկվում են նաև ֆակուլտետի որակի պատասխանատուները և ուսանողական կազմի 2 ներկայացուցիչ, ինչպես նաև 2 արտաքին շահակից, անհրաժեշտության դեպքում վերջիններս կարող են փոխարինվել Ինստիտուտի գործատու–դասախոսներով:

13. Մշտադիտարկման խումբն առաջնորդվում է կրթական ծրագրի ընթացիկ մշտադիտարկման սույն ընթացակարգով և հաստատված ժամանակացույցով (Հավելված 1): Գործընթացը սկսվում է նախորդ մշտադիտարկումից (առկայության դեպքում) հետո ծրագրի իրականացման արդյունքում ստացված կատարողականի արդյունքային ցուցանիշների հավաքագրմամբ և վերլուծությամբ:

14. Մշտադիտարկման արդյունքների հիման վրա, ըստ սահմանված հաշվետվության ձևաթղթի (Հավելված 2), ՄԽ–ն կազմում է հաշվետվությունը և ինքնավերլուծությունը՝ ըստ ներկայացված չափանիշների և չափորոշիչների:

15. ՄԽ ղեկավարը մշտադիտարկման զեկույցը և կից փաստաթղթերը, ԿԾ բարելավման պլանը (Հավելված 3) ներկայացնում է ֆակուլտետի խորհրդի քննարկմանը:

16. Մշտադիտարկման հաշվետվությունը ֆակուլտետի խորհրդի ընդունած որոշման հետ ներկայացվում է Ուսումնագիտական գծով պրոռեկտորի և Որակի ապահովման բաժնի դիտարկմանը:

17. Ուսումնագիտական գծով պրոռեկտորը և ՈԱԲ–ը գնահատում են մշտադիտարկման հաշվետվությունը, բարելավման պլանը՝ համապատասխան եզրակացություններով ու այն ներկայացնում ԳԽ քննարկմանն ու որոշմանը.

18. Գիտական խորհուրդը կարող է ընդունել հետևյալ որոշումները.

1) Դրական՝ ԿԾ–ն շարունակում է գործունեությունը՝ կիրառելով բարելավման պլանը,

2) Բավարար՝ ԿԾ–ն վերանայվում է և վերամշակվում,

3) Անբավարար (Հավելված 5)՝ ԿԾ գործունեությունը համարվում է ռիսկային:

19. Ռիսկային են համարվում այն ծրագրերը, որոնք նոր են ներդրվել, բացասական եզրակացություն են ստացել նախորդ մշտադիտարկման, պարբերական վերանայման կամ որակի արտաքին գնահատման/հավատարմագրման արդյունքներով:

20. Ռիսկային համարվող կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացն իրականացվում է սույն ընթացակարգով տարեկան պարբերականությամբ:

21. Գիտական խորհուրդը, հիմնվելով ՄԽ հաշվետվության, Ուսումնագիտական գծով պրոռեկտորի և ՈԱԲ–ի եզրակացությունների վրա, ռիսկային համարվող կրթական ծրագրի վերաբերյալ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) ծրագիրը շարունակել՝ հաշվի առնելով մշտադիտարկման արդյունքում արված դիտողություններն ու բարելավման առաջարկությունները,

2) ծրագիրը համարել պայմանական և ստեղծել համապատասխան հանձնախմբեր սահմանված ժամկետում այն վերանայելու և վերամշակելու համար,

3) ծրագիրը համարել անբավարար (Հավելված 6) և սկսել դրա դադարեցման գործընթացը:

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

3.1. Պարբերական վերանայման նպատակը և խնդիրները

22. Պարբերական վերանայման գլխավոր նպատակը կրթական ծրագրի արդյունավետության և որակի շարունակական բարելավումն է՝ ապահովելով դրա համապատասխանությունը Ինստիտուտի առաքելությանն ու տվյալ կրթական ծրագրի նպատակներին:

23. Վերանայման հիմնական խնդիրներն են.

1) վերագնահատել ծրագրի արդիականությունը և պահանջարկը աշխատաշուկայում՝ հաշվի առնելով համապատասխան մասնագիտական ոլորտում գիտելիքի կիրառման առկա պրակտիկան, տեխնոլոգիական առաջընթացը և դասավանդման ու ուսումնառության մեթոդների զարգացումը,

2) հաշվի առնել արտաքին ծրագրային պահանջների փոփոխությունները (օրինակ՝ կրթական չափորոշիչներ, որակավորումների ոլորտային, ազգային կամ եվրոպական շրջանակներ, միջազգային առարկայական կողմնորոշիչներ, համապատասխան մասնագիտական, օրենսդիր և ոլորտը կարգավորող կառույցների պահանջներ) և դրանց հետ համադրել ծրագրի փաստացի կրթական վերջնարդյունքները,

3) գնահատել ծրագրի կառուցվածքում և իրականացման մեթոդներում կատարված փոփոխությունների ազդեցությունը ծրագրի որակի վրա,

4) հաշվի առնել հավատարմագրող, արտաքին գնահատում իրականացնող կառույցների և գործատուների եզրակացություններն ու կարծիքները,

5) դիտարկել ծրագրի ծախսաարդյունավետությունը,

6) նախաձեռնել վերլուծությունից բխող ծրագրային փոփոխություններ,

7) հիմնավորել ծրագրի շարունակման, վերանայման կամ դադարեցման նպատակահարմարությունը,

8) վերջնարդյունքում ունենալ վերամշակված կրթական ծրագիր:

3.2. Պարբերական վերանայման ընթացակարգը

24. Բակալավրի կրթական ծրագրերի վերանայման պարբերականությունը սահմանվում է 4-5 տարի, իսկ մագիստրատուրայի և հետբուհական ԿԾ–ների համար՝ 2-3 տարի: Լրացուցիչ կրթական ծրագրերը վերանայվում են առնվազն 1 տարվա պարբերականությամբ:

25. Ծրագրի վերանայման գործընթաց է պահանջվում յուրաքանչյուր անգամ, երբ ծրագրի բովանդակության (առարկաների) փոփոխությունները գերազանցում են դրա ընդհանուր ծավալի 30%-ը:

26. Արտահերթ վերանայում կարող է նշանակվել ըստ անհրաժեշտության՝ Ուսումնագիտական գծով պրոռեկտորի կամ Որակի ապահովման բաժնի առաջարկությամբ:

27. Գիտական խորհուրդը գնահատում է մշտադիտարկման հաշվետվությունը բարելավման պլանի հետ մեկտեղ և բավարար գնահատականի դեպքում որոշում ընդունում ձևավորելու ԿԾ վերանայման խումբ (այսուհետ՝ ՎԽ):

28. Ուսումնագիտական գծով պրոռեկտորը նշանակվում է ՎԽ ղեկավար և ռեկտորի հաստատմանը ներկայացնում ընթացակարգով սահմանված գործողությունների իրականացման ժամանակացույցը:

29. Վերանայման խումբը բաղկացած է առնվազն 5 անդամից, որոնց նշանակում է ՎԽ ղեկավարը: ՎԽ կազմում ներգրավվում են ֆակուլտետի դեկանը, ամբիոնների վարիչներ, կրթական ծրագրում ներգրավված ՊԴ կազմից մինչև 3 անդամ: Խմբում պարտադիր կերպով ընդգրկվում է ուսանողական կազմից և կրթական ծրագրի շրջանավարտներից մեկական ներկայացուցիչ: ՎԽ–ում կարող են ներգրավվել նաև արտաքին փորձագետներ, ներկայացուցիչներ գործատու ոլորտից:

30. Վերանայման գործընթացի մեկնարկից առաջ Որակի ապահովման բաժինը կազմակերպում է խորհրդատվություն վերանայման խմբի անդամների հետ՝ կրթական ծրագրերի վերանայման ընթացակարգերի, կիրառվող մեթոդաբանության և ուղենիշների վերաբերյալ:

31. ՎԽ խումբը կազմում է վերանայման հաշվետվություն (Հավելված 4) և վերամշակված կրթական ծրագիրը ներկայացնում Ուսումնագիտական գծով պրոռեկտորին և Որակի ապահովման բաժնին՝ իրականացնելու կրթական ծրագրի համակողմանի վերլուծություն:

32. Ուսումնագիտական գծով պրոռեկտորի և ՈԱԲ դրական եզրակացությունները ստանալուց հետո վերանայված կրթական ծրագիրը Ուսումնագիտական գծով պրոռեկտորի կողմից ներկայացվում է Գիտական խորհրդի հաստատմանը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԿԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Սեպտեմբերի 30	Կրթական ծրագրի պատասխանատուն ստեղծում է կրթական ծրագրի ընթացիկ մշտադիտարկման խումբ (ՄԽ)
Հոկտեմբերի 1–Նոյեմբերի 1	ՄԽ–ն իրականացնում է նախորդ մշտադիտարկման կատարողականի արդյունքային ցուցանիշների հավաքագրում և վերլուծություն
Նոյեմբերի 2–Դեկտեմբերի 29	ՄԽ–ն իրականացնում է ընթացիկ մշտադիտարկում՝ գործադրելով սահմանված գործիքակազմը
Հունվարի 3–Հունվարի 20	ՄԽ–ն կազմում է հաշվետվություն՝ ըստ ձևաթղթի
Հունվարի 21–Հունվարի 26	Հաշվետվությունը և առաջարկվող բարելավման պլանը ներկայացվում են ֆակուլտետի խորհրդին
Հունվարի 27–Փետրվարի 1	Ֆակուլտետի խորհուրդը քննարկում է հաշվետվությունը և ներկայացնում ԳԽ քննարկման
Փետրվարի 2–Փետրվարի 15	ԳԽ–ն կայացնում է որոշում՝ գնահատելով հաշվետվությունը

Դրական գնահատականի դեպքում ԿԾ–ն շարունակում է գործունեությունը՝ իրականացնելով բարելավման պլանը

Բավարար գնահատականի դեպքում որոշում է ընդունվում ձևավորել վերանայման խումբ:

Անբավարար գնահատականի դեպքում ԿԾ–ն համարվում է ռիսկային:

Փետրվարի 16	Ձևավորվում է վերանայման խումբը
Փետրվարի 17	Որակի ապահովման բաժինը կազմակերպում է խորհրդատվություն վերանայման խմբի անդամների հետ
Փետրվարի 18–Մարտի 17	Վերանայման խումբն իրականացնում է կրթական ծրագրի համակողմանի վերանայում
Մարտի 18	ՎԽ–ն ներկայացնում է վերանայված կրթական ծրագիրը ՎԽ ղեկավարին
Ապրիլի 1	Վերանայված կրթական ծրագիրը Ուսումնագիտական գծով պրոռեկտորի եզրակացության հետ ներկայացվում է Որակի ապահովման բաժին
Ապրիլի 2 – Ապրիլի 18	ՈԱԲ–ը իրականացնում է վերանայված կրթական ծրագրի ուսումնասիրություն: Անհամաատասխանության դեպքում դրանք վերադարձվում են ուսումնական ստորաբաժանմանը՝ վերանայման համար
Ապրիլի 19	Ուսումնագիտական գծով պրոռեկտորը վերանայված կրթական ծրագիրը՝ ՈԱԲ–ի վերլուծությամբ, ներկայացնում է Գիտական խորհրդին՝ հաստատման:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Աղյուսակ 1

	1. Մշտադիտարկման խմբի կազմը /անուն, ազգանուն, պաշտոն կամ կուրս/	
Ղեկավար	1	
ՊԴ կազմից անդամներ	2	
	3	
	4	
Ուսանող անդամներ	5	
	6	
Արտաքին շահակիցներ	7	
	8	

Աղյուսակ 2

2. Մշտադիտարկվող կրթական ծրագիրը /Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության դասիչը/	
Ուսուցման ձևը /առկա, հեռակա/	
Շնորհվող որակավորումը	
Ծրագրի մեկնարկային տարին	
Ծրագրի նախորդ մշտադիտարկման ամսաթիվը (առկայության դեպքում)	
Ծրագրի նախորդ վերանայման տարեթիվը	

Աղյուսակ 3

3. Նախորդ մշտադիտարկման արդյունքներով ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը			
	Միջոցառում (գործողություն)	Կատարողականը	Ժամկետ
1.			
2.			
3.			
4.			
5.			

4. Ծրագրի քանակական ցուցանիշները						
Ուս. տարի	20___ – 20___		20___ – 20___		20___ – 20___	
Ընդունելությունը և ուսանողական կազմը						
	Առկա	Հեռակա	Առկա	Հեռակա	Առկա	Հեռակա
Դիմորդների թիվը						
Ընդունելության մրցութային ցուցանիշը						
Անցողիկ շեմային միավորը						
Ընդունված ուսանողների թվաքանակը						
Ընդունելության միջին միավորը						
Ուսումնական առաջադիմության ցուցանիշները						
	Առկա	Հեռակա	Առկա	Հեռակա	Առկա	Հեռակա
«Գրազանց», «լավ» և «բավարար» գնահատականների բաշխումն ըստ ուսանողների թվի (%-ով)						
Ծրագրում ընդգրկված ուսանողների միջին որակական գնահատականների (ՄՈԳ–երի) միջինացված թիվը						
Ուսանողների ներքին շարժունության ցուցանիշը						
Ուսանողների արտաքին շարժունության ցուցանիշը						

Աղյուսակ 5

	Բարելավման ոլորտը/ առարկան	Պլանավորված միջոցառումը/ գործողությունը	Կատարման ժամկետը
1.			
2.			
3.			
4.			
5.			

ՄԿԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ

Չափանիշ 1. Կրթական ծրագրի բովանդակությունը և իրականացումը

Չափորոշիչ 1.1 Կրթական ծրագրի շրջանակում կիրառվող ուսումնառության և գնահատման մեթոդները նպաստում են ուսանողակենտրոն ուսուցմանը:

1.1.1 ԿԾ–ում առկա են դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը, դասընթացների ծրագրերը, որոնք համապատասխանում են ԿԾ-ում սահմանված վերջնարդյունքներին:
1.1.2 Ուսումնառության ակնկալվող արդյունքները հստակ արտացոլում են շահակիցների պահանջները:
1.1.3 ԿԾ-ի շրջանակում կիրառվում են ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ, որոնք նպաստում են ուսանողակենտրոն և որակյալ ուսուցմանը:
1.1.4 ԿԾ-ի շրջանակում առկա են գնահատման համակարգի բարելավման մեխանիզմներ:
1.1.5 ԿԾ–ի իրականացման համար առկա է մասնագիտական որակավորում և հմտություններ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ (տե՛ս Աղյուսակ 6 և Աղյուսակ 7):
1"1"6 ՄԿԾ շրջանակում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:
1.1.7 ԿԾ-ի շրջանակում առկա է սահմանափակ կարողություններով ուսանողների ուսուցման և գնահատման համակարգ:

Աղյուսակ 6

Տվյալներ պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ (ընթացիկ ուսումնական տարվա դրությամբ)						
Անուն, ազգանուն	Տարիք	Կրթություն, Որակավո–րում	Գիտաման-կավարժա կան ստաժ	Մարզչա–կան ստաժ	Պրակտիկ ոլորտ	Գիտական աստիճան, կոչում

Աղյուսակ 7

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցություն մարզումների, մրցաշարերի և այլն

Անուն, ազգանուն	Միջոցառման անվանումը	Անցկացման ամսաթիվը	Միջոցառման արդյունքը

Չափանիշ 2" Կրթական ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը

Չափորոշիչ 2.1 Կրթական ծրագրի արդյունավետ իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ և ուսումնամեթոդական բազա

2.1.1 Կրթական ծրագրի արդյունավետ իրականացման համար ապահովված են անհրաժեշտ ռեսուրսներ, ձևավորված է կրթական միջավայր:
2.1.2 Կրթական ծրագրի շրջանակում առկա է ուսումնամեթոդական անհրաժեշտ բազա:
2"1"3 Ուսումնական միջավայրը շարունակաբար բարելավվում է:

Չափանիշ 3. Կրթական ծրագրի շրջանակում իրականացվող գիտահետազոտական գործունեությունը

Չափորոշիչ 3.1 Կրթական ծրագիրը նպաստում է գիտահետազոտական գործունեության զարգացմանը

3.1.1 Կրթական ծրագիրը նպաստում է գիտահետազոտական գործունեության զարգացմանն ու նորարարական մոտեցումների ներդրմանը:
3"1"2 ԿԾ-ի շրջանակում խրախուսվում է ուսանողի ստեղծագործական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ:
3"1"3 Բուհում ուսանողներին տրամադրվում է խորհրդատվական աջակցություն՝ ներգրավվելու բուհի գիտահետազոտական աշխատանքներում:
3.1.4 Դասախոսական կազմի հետազոտական արդյունքները ներդրվում են ուսումնական գործընթացում:
3.1.5 ԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Աղյուսակ 8

3.2 Կրթական ծրագիրը սպասարկող պրոֆեսորադասախոսական կազմի հրատարակած (ինչպես նաև՝ հրատարակության ընթացքում գտնվող) գիտական աշխատությունների (այդ թվում՝ գիտական հոդվածներ, մենագրություններ, ժողովածուներ, դասագրքեր, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ)					
Հեղինակ	Անվանում	Ուսումնական/ մեթոդական	Հրատարակ-չություն	Տպագրման տարեթիվ	Էջերի քանակ

(անուն, ազգանուն)		ձեռնարկ/ դասագիրք/ գիտական հոդված			

Աղյուսակ 9

3.3 Կրթական ծրագիրը սպասարկող պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցություն ՀՀ-ում և արտերկրում կազմակերպված գիտաժողովներին, մրցույթներին, վերապատրաստման ծրագրերին և դասընթացներին (այդ թվում՝ մասնագիտական)				
Անուն Ազգանուն	Միջոցառման անվանումը	Միջոցառման տեսակը	Անցկացման Վայրը	Ամիս, ամսաթիվ

Աղյուսակ 10

3.4 Գիտահետազոտական ծրագրերի շրջանակում (այդ թվում՝ դրամաշնորհային) իրականացված հետազոտությունները			
Ծրագրի անվանումը	Ժամկետը	Հետազոտողը /անուն, ազգանուն/	Ֆինանսավորման աղբյուրը և ծավալները

Չափանիշ 4. Կրթական ծրագրի որակի բարելավման մեխանիզմները և միջազգայնացման ցուցանիշները

Չափորոշիչ 4.1 ԿԾ շրջանակում գործում են ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման ընթացակարգեր և մեխանիզմներ

4.1.1 ԿԾ–ն ունի որակի ապահովման մշակված մեխանիզմներ և պատասխանատու:
4.1.2 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են ԿԾ–ի որակի ներքին ապահովման գործընթացներում:
4.1.3 ԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող կրթական գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի բարելավման համար:

4.1.4 ԿԾ-ի շրջանակում իրականացվում է առաջավոր փորձի ուսումնասիրում և համեմատական վերլուծության արդյունքների հիման վրա կատարվում են կրթական ծրագրի բարելավման աշխատանքներ:
4.1.5 ԿԾ մակարդակում ձևավորված միջազգային համագործակցությունները նպաստում են կրթական ծրագրի միջազգայնացմանն ու դասախոսական և ուսանողական շարժունության ցուցանիշների բարելավմանը (տես՝ Աղյուսակներ 11-15):

Աղյուսակ 11

4.1 Միջազգային համագործակցային հնարավորություններ				
Ծրագրի անվանումը	Գործընկեր	Համագործակցության ձևը	Տարեթիվ	Մասնակից ուսանողներ /Ա.Ա.Հ/

Աղյուսակ 12

4.2 ԿԾ ուսանողի արտագնա շարժունություն				
Ուսանող /Ա.Ա.Հ./	Շարժունության երկիրը	Շարժունության բուհը	Արդյունքը	Ժամկետը

Աղյուսակ 13

4.3 ԿԾ ուսանողի ներգնա շարժունություն				
Ուսանող /Ա.Ա.Հ./	Շարժունության երկիրը	Շարժունության բուհը	Արդյունքը	Ժամկետը

Աղյուսակ 14

4.4 ԿԾ ՊԴ կազմի արտագնա շարժունություն				
ՊԴ անդամ /Ա.Ա.Հ./	Շարժունության երկիրը	Շարժունության բուհը	Արդյունքը	Ժամկետը

4.5 ԿԾ ՊԴ կազմի ներգնա շարժունություն				
ՊԴ անդամ /Ա.Ա.Հ./	Շարժունության երկիրը	Շարժունության բուհը	Արդյունքը	Ժամկետը

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ SWOT (ՈՒԹՀՎ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

SWOT			
Ուժեղ կողմերը *(ներքին)*		Թույլ կողմերը *(ներքին)*	
1"		1"	
2"		2"	
3"		3"	
Հնարավորությունները *(արտաքին)*		Վտանգները *(արտաքին)*	
1"		1"	
2"		2"	
3"		3"	
Վերլուծել և ներկայացնել բարելավման հիմնական քայլերը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի հնարավոր լինի կրթական ծրագրի Ուժեղ կողմերը և Հնարավորությունները օգտագործելով չեզոքացնել Թույլ կողմերը և Վտանգները:			

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՊԼԱՆԻ ՁԵՎԱԹԵՐԹ

Աղյուսակ 16

Մշտադիտարկման արդյունքները և բարելավման պլանը քննարկվել են Գիտական խորհրդի կողմից՝

1.	**ՄԿԾ մշտադիտարկման արդյունքում վերհանված խոշոր խնդիրները** _____ _____ _____ _____

	Բարելավման գործողությունները /քայլերը	Ակնկալվող արդյունքը	Ժամկետները	Պատասխանատուները
1.1		1.1.1		
		1.1.2		
		1.1.3		
		1.1.4		
1.2		1.2.1		
		1.2.2		
		1.2.3		
		1.2.4		

	Այո
	Ոչ

Մշտադիտարկման արդյունքները գնահատվել են Գիտական խորհրդի կողմից՝

	Դրական			Բավարար		Անբավարար

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Աղյուսակ 17

	1. Վերանայման խմբի կազմը /անուն, ազգանուն, պաշտոն կամ կուրս/	
Ղեկավար	1	
ՊԴ կազմից անդամներ	2	
	3	
	4	
Ուսանող	5	
ԿԾ շրջանավարտ	6	
Արտաքին շահակից	7	

Աղյուսակ 18

2. Վերանայմանն ուղղված գործողություններ		
Գործողություն		Արդյունք
1.		
2.		
3.		
4.		
5.		

Աղյուսակ 19

3. ԿԾ-ի վերանայում		
ԿԾ թերություն		Բարելավման առաջարկվող քայլերը
1.		
2.		
3.		
4.		
5.		

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՌԻՍԿԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Աղյուսակ 20

Կրթական ծրագրի /Անվանում, դասիչ/		Մշտադիտարկման խմբի ղեկավար /Ա.Ա.Հ./	
Ընդհանուր եզրակացություններ			
ՄԽ եզրակացություն	ՎԽ կարծիք	ՈԱԲ կարծիք	
Ռիսկայնության հակիրճ նկարագիր		Դիտարկված փաստաթղթերը	
Ռիսկայնությունը հիմնավորող փաստեր			
Գիտական խորհրդի որոշում			

Աղյուսակ 21

Պաշտոն	Ա.Ա.Հ	Ստորագրություն
Գիտխորհրդի նախագահ, ռեկտոր		
ՎԽ ղեկավար		
ՈԱԲ ղեկավար		
ԿԾ ղեկավար		
Անկախ անդամ		

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 22

Կրթական ծրագրի /Անվանում, դասիչ/		Մշտադիտարկման խմբի ղեկավար /Ա.Ա.Հ./	
Ընդհանուր եզրակացություններ			
ՄԽ եզրակացություն	ՎԽ կարծիք	ՈԱԲ կարծիք	
Անհամապատասխանության հակիրճ նկարագիր		Դիտարկված փաստաթղթերը	
Անահամապատասխանությունը հիմնավորող փաստեր			
Գիտական խորհրդի որոշում			

Աղյուսակ 23

Պաշտոն	Ա.Ա.Հ	Ստորագրություն
Գիտխորհրդի նախագահ,ռեկտոր		
ՎԽ ղեկավար		
ՈԱԲ ղեկավար		
ԿԾ ղեկավար		